

ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

1954 թվականի հուլիսի 2—7-ը ՍՍՌՄ Գերագույն Դատարանի Ռազմական կոլեգիան դատական նիստում քննեց Մ. Գ. Ռյումինի գործը, որը մեղադրվում էր ՌՍՖՍՌ Բրեսևյան Օրենսգրքի 58—7 հոդվածով նախատեսված հանցագործության մեջ:

Դատական քննությանը հաստատված է, որ Ռյումինը նախկին Պետական անվտանգության միևնույնության ավագ քննիչի, իսկ հետո նաև հատուկ կարևորություն ունեցող գործերի գծով քննչական մասի պետի պաշտոնով աշխատելու ժամանակաշրջանում, գործելով որպես սովետական պետության թաքնված թշնամի, կարչերիստական և ավանդյուրիստական նպատակներով կանգնել էր հետաքննական նշույթի կեղծման ուղու վրա, որոնց հիման վրա ստեղծվել էին սլոնիկացիտն գործեր և կատարվել սովետական մի շարք քաղաքացիների՝ այդ թվում բժշկականության ակադեմիայի գործիչների անհիմն ձերբակալություններ:

Ինչպես դատարանում ցուցմունքներ տվեցին վկաները, Ռյումինը, կիրառելով սովետական օրենքով արգելված քննության եղանակներ, ձերբակալվածներին ստիպել է իրենց և այլ անձանց արատավորելու պետական ամենածանր հանցագործություններ՝ Հայրենիքի դավաճանություն, վնասարարություն, լրտեսություն և այլ հանցանքներ կատարելու մեջ:

Հետագա քննությանը հաստատված է, որ այդ մեղադրանքները ոչ մի հիմք չեն ունեցել և այդ հերյուրված գործերով մեղադրված անձինք լիովին արդարացել են:

Հաշվի առնելով Ռյումինի վնասարարական գործունեության առանձնահատուկ վտանգը և նրա կատարած հանցագործությունների հետևանքների ծանրությունը, ՍՍՌՄ Գերագույն Դատարանի Ռազմական կոլեգիան Ռյումինին դատապարտեց պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության:

Դատավճիռը ի կատար է ածված: